

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

22 ապրիլի 2016 թ.

N 113-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 80-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը.

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի մայիսի 6-ի «Պետական և համայնքային անտառներում բնափայտի մթերման կարգը հաստատելու մասին» N 80-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 9-րդ կետի N 3 աղյուսակի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

1. Երկարությունը (մ)	մինչև 1.0
----------------------	-----------

2) 10-րդ կետի N 4 աղյուսակի 2-րդ և 3-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

3) 30-րդ կետի «25-27» թվերը փոխարինել «27-29» թվերով,

4) 13-րդ գլխի վերնագիրը և 32-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«XIII. ԿԼՈՐ ՓԱՅՏԱՆՑՈՒԹԻ (ԳԵՐԱՆԻ) ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՏԱՅԻՆ ՉԱՓՈՒՄԸ

32. Ծինափայտի (գերանի) քանակական ցուցանիշ է հանդիսանում նրա ծավալը (առանց կեղևի), որը չափվում է յուրաքանչյուր գերանի համար առանձին՝ համաձայն սույն կարգի գերանների ծավալների հատային հաշվարկման N 6-րդ աղյուսակի»:

5) 15-րդ գլխի վերնագիրը և համարակալումը հանել, իսկ 36-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

6) Կարգի «XVI», «XVII», «XVIII», «XIX», «XX», «XXI», «XXII», թվերը համապատասխանաբար փոխարինել «XIV», «XV», «XVI», «XVII», «XVIII», «XIX», «XX», «XXI» թվերով,

7) 35-րդ կետի «Ծինափայտի» բառը փոխարինել «Սույն կարգի N 6-րդ աղյուսակում գերանի չափագրական տվյալների բացակայության դեպքում շինափայտի (գերանի)» բառերով,

8) N 6-րդ աղյուսակի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«Գերանների ծավալների հատային հաշվարկման աղյուսակ (1,0 սմ/մ)»:

9) 37-րդ կետի «60» թիվը փոխարինել «61» թվով,

10) 40-րդ կետի «(N 14 պատկեր)» բառերը փոխարինել «(N 2 նկար)» բառերով,

11) 58-րդ կետի «և իրացման» բառերը հանել, իսկ 6)-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

12) 58-րդ կետից հետո լրացնել նոր 58.1-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«58.1. Ծինափայտի և վառելափայտի իրացման դեպքում անհրաժեշտ փաստաթղթավորումն իրականացվում է համաձայն «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հավելվածով սահմանված «Հայաստանի Հանրապետությունում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման» կարգի (այսուհետ՝ հարկային փաստաթղթեր)»:

13) 60-րդ կետի «անտառօգտագործողին» և «անտառօգտագործողի» բառերը համապատասխանաբար փոխարինել «հայտատուին» և «հայտատուի» բառերով,

14) 62-րդ կետի «34» թիվը փոխարինել «35» թվով,

15) 72-րդ կետի 2)-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) Իրացման դեպքում՝ հարկային փաստաթղթերը, համաձայն սույն կարգի 58.1-րդ կետի:»:

Նախարար՝

Ս. Կարապետյան